ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
<<ԱՐԱՔՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Էլ.հասցե՝ araqsimijnakarq.dproc@mail.ru
Հեռախոս՝ 041-20-27-25

26.08.2024թ.

Հրաման №90-Լ

Արաքսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին.

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի կետով և Ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի 3-րդ գլխի 16-րդ կետով:

1. Հաստատությունում դասավար /20 դասաժամ/ 1-ին դասարան, դասվար /17 դասաժամ/ 4րդ դասարան/ մայրենի /6 դասաժամ/ 5-րդ դասարան, հայոց պատմություն / 6 դասաժամ/ , հայոց լեզու և գրականություն / 13 դասաժամ/ ֆիզիկա / 11 դասաժամ/ առարկաների թափուր տեղի մրցույթ:
2. Հավակնորդների գործերի ընդունման պատասխանատու նշանակել Մարիամ Սահակյանին:
3. Փաստաթղթերը ընդունվում են 2024թ-ի օգոստոսի 28-ից մինչև 2024թ-ի սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթը տեղի կունենա 2024թ. սեպտեմբերի 13-ին ժամը 15:00-ին <<Արաքսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:
5. Հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից

Տնօրեն՝ Ս. Նավասարդյան

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքի <<Արաքսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվար /20 դասաժամ/ 1-ին դասարան, դասվար /17 դասաժամ/ 4րդ դասարան/ մայրենի /6 դասաժամ/ 5-րդ դասարան, հայոց պատմություն / 6 դասաժամ/ , հայոց լեզու և գրականություն / 13 դասաժամ/ ֆիզիկա / 11 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի օգոստոսի 28-ից մինչև 2024թ-ի սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ-ի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքի <<Արաքսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /041 20 27 25/ հեռախոսահամարով: